

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Արցախի պետական համալսարանի խորհրդի 2021թ. ապրիլի 1-ի N 6 նիստի

Նիստին ներկա էին խորհրդի կազմի 25 անդամներից 23-ը:
Հրավիրված էին խորհրդի անդամ չհանդիսացող ԱրՊՀ պրոռեկտորները, դեկանները:

Նախագահությամբ՝ Գրիգորի Իգորի Մարտիրոսյանի
Քարտուղարությամբ՝ Լուսինե Գեորգիի Մարգարյանի

ՕՐԱԿԱՐԳ

1.Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին

/Զեկուցող՝ ռեկտոր Ա. Յու. Սարգսյան/

2.Արցախի պետական համալսարանի 2020 ֆինանսական տարվա արդյունքների մասին

/Զեկուցող՝ ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն.Գրիգորյան /

3. Արցախի պետական համալսարանի 2021թ. ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին

/Զեկուցող՝ ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն.Գրիգորյան /

4.Այլ հարցեր

1.Լսեցին՝

Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, որը ներկայացրեց ԱրՊՀ ռեկտոր Ա. Յու. Սարգսյանը:

Ըստ համալսարանի գործունեության կազմակերպման բաղադրիչների՝ ռեկտոր Ա. Յու. Սարգսյանը մանրամասն ներկայացրեց 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքը:*/Հաշվետվությունը կցվում է. առդիր 10 էջ/:*

Հաշվետվությունն ամփոփվեց համալսարանի մեկամյա գործունեությունը ներկայացնող սահիկով:

Ռեկտորի տեղեկատվությունից հետո խորհրդի նախագահը հայտարարեց հարցերի և էլույթների հերթագրում:

Հարցի համար հերթագրվեցին՝

- 1. Մանուշ Մառլեստի Մինասյանը/3հարց/*
- 2. Իրա Մավրիկի Թադևոսյանը /1հարց և 1առաջարկ/*
- 3. Լուսինե Գաչայի Ղարախանյանը/1հարց/*

Էլույթի համար հերթագրվեցին՝

- 1. Շահեն Վարդանի Այդինյանը**
- 2. Լուսինե Գեորգիի Մարգարյանը**
- 3. Լիլիթ Սուրենի Մարգարյանը**
- 4. Լուսինե Գաչայի Ղարախանյանը**

Ըստ հերթագրման՝ ռեկտորին հարց տալու հնարավորություն տրվեց:

Հարց 1-ին. Համավարակի մարտահրավերը ուսումնական գործընթացի կազմակերպման ի՞նչ փոփոխություններ է թելադրել, ինչպե՞ս է համակարգվել և խմբագրվել ուսումնական աշխատանքը, որը բնականոն ուսումնական գործընթացն էր պահանջում:

Պատասխան 1-ին. – Երկրորդ կիսամյակի մեկնարկից գրեթե անմիջապես հետո բուհն ստիպված էր դադարեցնել պարապմունքները՝ վերահաս համավարակի տարածվածությամբ պայմանավորված: Ի սկզբանե թվում էր՝ կարճ կարող էր տևել դա, բայց դեպքերի զարգացման ընթացքը այլ ուղի նշեցին: Նույնիսկ պարապմունքների դադարեցման առաջին իսկ օրերին բուհն արդեն փնտրում էր հիմնական ուսուցման այլընտրանքային ձևը: Սեղմ ժամանակահատվածում ուսումնասիրվեցին այլ երկրների, ՀՀ-ի որոնումների արդյունքները, փորձը, նրանց կողմից կիրառվող միջոցները: Շաբաթական պարբերականությամբ ռեկտորատի նիստեր էին գումարվում, քննարկվում առաջարկները, տարբեր բուհերի մոտեցումները: Որևէ կարգ չմշակվեց այդ շրջանում, ըստ խնդիրների էին որոշումները կայացվում: Եվ երբ արդեն հեռավար ուսուցման տարբերակն անխուսափելի էր, երկշաբաթյա ժամանակահատվածում ողջ համակազմը վերապատրաստվեց Zoom հարթակով հեռավար ուսուցումը կազմակերպելու: Ու հաջողվեց: Հետո այդ փորձը դարձավ լիարժեք ճանաչողություն, որի հիմքով էլ մշակվեց հեռավար ուսուցման կարգը, ու բուհում ներդրվեց էլեկտրոնային հարթակ՝ Classroom-ը՝ ՀՊՄՀ-ի հետ համագործակցությամբ: Իսկ կատարված աշխատանքների արդյունավետությունը հնարավոր եղավ գնահատել անբարենպաստ պայմաններում՝ պատերազմով ընդհատված ուսուցումը վերսկսելու անհրաժեշտության պայմաններում: Կարելի է հաստատել, որ բուհը համավարակի մարտահրավերը հաղթահարել է, ըստ հնարավորի, լիապես:

Հարց 2-րդ. Ուսանողական հանրակացարանի 2 շքամուտքերի և հարկաբաժինների ժամանակավոր բնակեցվածության փաստը լուրջ խնդիր է ուսանողների՝ կացարանով ապահովվածության հարցը լուծելու համար: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այդ խնդիրը լուծելու ուղղությամբ:

Պատասխան 2-րդ. – Ա. Մարգարյանը նշեց, որ դա իսկապես մտահոգող խնդիր է, բայց դեռևս առկախ լուծմամբ, և բուհի ուսանողությունն անմիջապես զգացել է այդ անհարմարությունը, բայց իրավիճակի պահանջով վերադասավորումներ են իրականացվել, և մոտ 40 տեղով լրացվել է պակասը:

Խորհրդի նախագահը լրացրեց, որ հանրակացարանի այդ երկու հարկաբաժինները դեռևս կծառայեն տեղահանվածներին այնքան, որքան ժամանակ կպահանջվի մինչև նրանց կացարանով ապահովվածության խնդիրը լուծելը:

Հարց 3-րդ. Ի՞նչ է փոխվել ԱրՊՀ ֆինանսական դրության բարելավման ուղղությամբ՝ արտաբյուջետային լրացուցիչ աղբյուրների ներգրավման հաշվին:

Պատասխան 3-րդ. ԱրՊՀ ֆինանսական դրության բարելավման հարցը՝ արտաբյուջետային լրացուցիչ աղբյուրների ներգրավման ճանապարհով, միշտ էլ օրակարգային էր, ներկա իրավիճակը առավել ևս խոչընդոտում է այդ աշխատանքների իրականացման արդյունավետությունը, բայց մյուս կողմից՝ հավատարմագրման գործընթացը կարող է մեղմել իրավիճակը: Խնդիրը դիտակետում է ու մնում է առաջնային բուհի օրակարգում:

Հարց 4-րդ. Համալսարանի շրջանավարտների քանի՞ տոկոսն է մասնագիտությամբ աշխատում. կա՞ն հաշվարկներ, և որքանո՞վ է համալսարանը հետաքրքրված իր շրջանավարտի հետագա մասնագիտական գործունեությամբ:

Պատասխան 4-րդ. Շրջանավարտների զբաղվածության խնդիրը պարզող վիճակագրական հստակ տվյալներ առայժմ բուհը չունի, բայց դրա կարևորության պահանջն է թելադրել, որ բուհում ստեղծվել է համապատասխան կառույց: Այդ կառույցի կողմից իրականացվում են շրջանավարտների տվյալների հավաքագրում ու նրանց մասնագիտական հետազոծի բացահայտում: Աշխատանքները դեռևս չեն ամբողջացվել, և չկան վերլուծություններ:

Առաջարկ. Հնարավոր է հաջորդ տարի ներկայացնել մեկ տարվա կտրվածքով շրջանավարտների զբաղվածության մասին <<հետախուզության>> արդյունքները:

Պատասխան. Այո՛, հնարավոր է, և կներկայացնենք արդյունքները, նշեց ռեկտորը:

Հարց 5-րդ. Պատերազմից հետո Ռազմավարական ծրագրում խմբագրումներ արվե՞լ են:

Պատասխան 5-րդ. Բուհի ՌԾ-ը կանխատեսում էր և իբրև վտանգ դիտարկել էր քաղաքական անկայուն իրավիճակը, դրանով պայմանավորված խնդիրներն էլ էին տեսանելի, իսկ դա նշանակում է, որ ՌԾ-ը մեծ փոփոխություններ չի կրի: Բացի այդ՝ ՌԾ-ը ունի գործողությունների ժամանակացույց՝ կարճաժամկետ պլանավորումներով, և իրավիճակով պայմանավորված փոփոխությունները ժամանակացույց-պլանում կխմբագրվեն՝ այդպիսով՝ ՌԾ-ով ապահովելով բուհի կայուն զարգացումը և սահմանված առաքելության իրականացումը:

Ելույթ 1-ին. Շ. Այդինյանը բավարար գնահատեց կատարված աշխատանքը՝ կարևորելով բուհում ներդրված հաշվետվողական համակարգի առկայությունը, ինչն ապահովում է բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքի իրական գնահատումը: Անդրադառնալով համավարակի շրջանում կազմակերպված ուսումնական գործընթացին և ներդրված ջանքերը կարևորելով՝ Այդինյանը նշեց, որ խնդիրները, այնուամենայնիվ, լիարժեքորեն լուծել հնարավոր չէր սպորտային մարզումների, նախնական զինվորական պատրաստության մասնագիտությունների դեպքում: Նա նշեց նաև, որ բուհ-հասարակություն-տնտեսություն համագործակցության գործող շրջանակների ընդլայնումը բուհի օրակարգային հարցն էր, և այդ ուղղությամբ որոշակի արդյունարար քայլեր են ձեռնարկվել:

Հատկանշեց նաև, որ բարելավվել են փորձուսուցման իրականացման աշխատանքները: Դեռևս անհրաժեշտություն է մնում նյութատեխնիկական բազայի վերազինումը:

Իբրև նկատառումներ՝ Շ. Այդինյանը կարևորեց.

ա/ Կրթության մասին նոր օրենքի և ԱՀ Կառավարությամբ արդեն իսկ հաստատված ՈԱՇ-ի պահանջների համադրելիության խնդրի հաշվառումը (ԱրՊՀ կրթական ծրագրերը մշակվել են ԱՀ ՈԱՇ-ի պահանջով, ԱրՊՀ ՌԾ-ը գրված է այդ պահանջների հաշվառմամբ):

բ/Դասախոսական կազմի վերապատրաստման գործընթացը և դրա իրականացումը փուլային սկզբունքով՝ ներբուհական, համահայկական, արտերկրյա: Նպատակահարմար է նաև ԱՀ ուսուցչության վերապատրաստման դասընթացները կազմակերպելիս հաշվի առնել բուհի գիտական ներուժը և այն արդյունավետորեն օգտագործել, քանի որ բուհն ինքնին կարող է հանդես գալ որպես վերապատրաստող կառույց՝ դպրոցի համակազմի վերապատրաստության համար. գ/ԱրՊՀ-ին կից քուլեջ ունենալու անհրաժեշտությունը:

Շ. Այդինյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ելույթ 2-րդ. _Լ. Մարգարյանը կարևորեց այն փաստը, որ ռեկտորի ներկայացրած հաշվետվությունը առաջին ամփոփումն է ՌԾ-ի ժամանակացույց-պլանով հաստատված մեկամյա աշխատանքների: Նշեց, որ ՌԾ-ով սահմանվածը որոշ դեպքերում իրականացվել է առավելաբար, թեպետ ուսումնական տարին արտակարգ պայմանների ընթացք էր թելադրել երկրորդ կիսամյակում: Եվ որ կարևոր էր, հենց այդ անկանխատեսելի ու արտակարգ իրավիճակն էր, որ ակնհայտ է դարձրել գործող համակարգի և դրա կառավարման արդյունավետությունը, կառավարչի հմտությունը:

Լ. Մարգարյանը, բարձր գնահատելով կատարած աշխատանքը, ուսումնական տարին երկու հիմնական ուղղություններով բնութագրեց. առաջին կիսամյակը կրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքների ընթացքավորման փուլն էր՝ ըստ ՌԾ-ի պահանջի, իսկ երկրորդ կիսամյակը՝ մարտահրավերին՝ համավարակին, արագ արձագանքելու և ուսուցման գործընթացը հնարավորինս լիարժեք կազմակերպելու հնարավորությունների համակարգման փուլն էր: Վերջինիս կազմակերպումը մեծ ջանք էր պահանջել և շաբաթական պարբերականությամբ ռեկտորատի նիստերով, ըստ խնդիրների՝ ընդունվող որոշումներով ողջ համակարգը կարճ ժամանակահատվածում վերապատրաստվել է Zoom հարթակով հեռավար ուսուցումը կազմակերպելու, ինչը հաջողվել է ողջ համակազմի՝ ուսանողության, պրոֆկազմի, տեխասպասարկման պատասխանատուների կողմից պատրաստական և կարգապահ վարքի դրսևորման արդյունքում: Այդ ամենը նաև փաստում է բաց ու համագործակցային կառավարման արդյունավետության մասին:

Լ. Մարգարյանը ներկայացված հաշվետվությունը որակեց բուհի կենսագրության մեջ ևս մեկ կարևոր ու գնահատելի էջ՝ ի հաստատում այն առաքելության, որ ի սկզբանե ստանձնել էր բուհը՝ դառնալով Արցախի մտավոր ուժի դարբնոցը և լինելով երկրի կրթական կարիքների սպասարկուն:

Լ. Մարգարյանը առաջարկեց ԱրՊՀ 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ելույթ 3-րդ. - Լիլիթ Մարգարյանը, ուսանողության անունից ներկայանալով, նույնպես բարձր գնահատեց 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքը: Առանձնապես կարևորեց ղեկավարության կողմից ստեղծված համագործակցային բաց ու թափանցիկ պայմանները, որոնք նպաստեցին ուսանող-ղեկավարություն առողջ հարաբերությունների ձևավորմանը: Հատկանշվեցին իրականացվող ուսանողակենտրոն քաղաքականությունը, ուսումնական գործընթացներում ուսանողների ակտիվության խթանմանն ուղղված մեծ ջանքերը, արժևորվեց իրականացված կրթադաստիարակաչական միջոցառումները, որոնք ուղղված էին ուսանողի մասնագիտական ներուժի բացահայտմանը, անձնային որակների զարգացմանը, հայրենաճանաչողության ապահովմանը:

Հատկապես առանձնանշվեցին համավարակի շրջանում կատարված աշխատանքները, որոնց կազմակերպման գործում ակտիվ դերակատարում ունեցան նաև ուսանողները. ավագի ինստիտուտը կարևոր դեր խաղաց այդ աշխատանքները համակարգելու և պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար:

Լիլիթ Մարգարյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ելույթ 4-րդ. - Լ. Ղարախանյանն արժանավոր որակեց բուհի մեկամյա գործունեությունը ու բարձր գնահատեց կատարած աշխատանքը, հատկանշեց տարվա ձեռքբերումը՝ հավատարմագրման գործընթացին լիարժեք պատրաստվածությունն ու այդ կարևոր փուլն անցնելը: Նա նշեց, որ բուհի հավատարմագրմամբ, ըստ էության, լուծվում է միջազգայնացման խնդիրը, ինչը կապահովի կայուն ու կանխատեսելի զարգացում: Եվ այդպիսի պայմաններում Լ. Ղարախանյանը կարևորեց հետազոտական ծրագրերի արդյունավետության բարձրացումը, միջազգայնացման հնարավորությունների լիարժեք օգտագործումը՝ հետազոտական նախագծերով ներկայանալու:

Մի շարք մասնագիտությունների՝ ֆիզիկայի, քիմիայի գծով, բուհն էլ խնդիր ունի. ֆիզիկայի դեպքում՝ կադրուժի և ուսանողների թվակազմի համալրման խնդիր, քիմիայի դեպքում՝ ուսանողների թվակազմի, և անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն ու վերաբերմունք դրսևորել, ինչին լիազոր մարմինը հետամուտ կլինի:

Լ. Ղարախանյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ամփոփելով և հիմք ընդունելով էլույթ ունեցողների գնահատականները՝ խորհրդի նախագահն առաջարկեց Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

1.Որոշեցին՝

Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

2.Լսեցին՝

Արցախի պետական համալսարանի 2020 ֆինանսական տարվա արդյունքների մասին:

ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյանն ամփոփ ներկայացրեց 2020թ. նախահաշվի կատարողականը: */Համապատասխան փաստաթուղթը կցվում է առդիր 1 էջ:/*

Զեկուցումից հետո խորհրդի նախագահը հայտարարեց հարցերի հերթագրում:

Հարցի համար հերթագրվեցին՝

1. Շահեն Վարդանի Այդինյանը

2. Անահիտ Մանվելի Մխիթարյանը/2 հարց/

Հարց 1-ին. Շ. Այդինյանը հետաքրքրվեց, թե բուհում ասիստենտի ամսական միջին աշխատավարձը որքա՞ն է կազմում:

Պատասխան 1-ին. ԱրՊՀ-ում ասիստենտի ամսական միջին աշխատավարձը մասհանումներով 120000 դրամ է կազմում:

Հարց 2-րդ. Ա. Մխիթարյանը, ուսանողության անունից ներկայանալով, հետաքրքրվեց շրջանավարտների վկայագրերի միջազգայնացման խնդրով. եթե հավատարմագրման գործընթացը կնպաստի վաղվա շրջանավարտների վկայագրերի ճանաչմանը ԱՀ և ՀՀ տարածքից դուրս, ապա ի՞նչ ճանաչում ունեն արդեն իսկ տրված վկայագրերը:

Հարց 3-րդ. 2021 թ. ԱրՊՀ ընդունելությունից ի՞նչ ակնկալիքներ կան:

Խորհրդի նախագահը հարցերը վերահասցեավորեց ճիշտ ուղղությամբ, և պատասխանը տրվեց ռեկտորի կողմից:

Պատասխան 2-րդ. Մինչ այսօր տրված բոլոր վկայագրերն էլ վավեր էին ու են, որովհետև ՀՀ և ԱՀ Կրթության մասին օրենքով Կառավարությունն էր բուհի հիմնադիրը, և հավատարմագրման պահանջ չկար: Բուհը պետական է և պետության կողմից հավատարմագրված: Արցախի պետական համալսարանի կողմից տրված վկայագրերը ՀՀ վկայագրեր են. արտերկրում ԱրՊՀ վկայագրերը միշտ էլ ընդունելի էին. 2 դեպք էր արձանագրվել ՌԴ-ում, երբ Արցախի պետական համալսարանի շրջանավարտի վկայագիրը հետ է տրվել. երկու դեպքում էլ պարզվել է գործատուի՝ աղբբեջանցի լինելու փաստը և դրանով պայմանավորված լինելը: Երկու դեպքում էլ անմիջապես ԱՀ ԿԳ-ից արձագանքել են և ՀՀ ԿԳ նախարարության միջնորդությամբ խոչընդոտը հարթել:

Պատասխան 3-րդ. Ա. Մարգարյանը խիստ պայմանական բնութագրեց տեսլականը, կանխատեսումները՝ զգուշավոր, բայց նշեց, որ բուհը փորձել է կանխատեսորեն հաշվարկել և գիտակցված է ներկայացրել իր կողմից տրվելիք կրթական ծրագրերի ցանկը՝ բավական զուսպ և կշռադատ. մի շարք կրթական ծրագրեր՝ թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերի, չեն հայտագրվել, ինչը բնավ չի նշանակում բուհի կողմից հրաժարում այդ կրթական ծրագրերից, պարզապես առժամանակ դրանք երկրորդվել են՝ իրավիճակով պայմանավորված:

Ռեկտորի պատասխան մեկնաբանությունները լսելուց հետո խորհրդի նախագահն առաջարկեց վերադառնալ քննարկվող բուն հարցին և քվեարկել 2020 ֆինանսական տարվա արդյունքները:

Բաց քվեարկությամբ միաձայն *բավարար* գնահատվեց և ի գիտություն ընդունվեց կատարված աշխատանքը:

2.Որոշեցին՝

ԱրՊՀ 2020 ֆինանսական տարվա արդյունքները գնահատել *բավարար* և ընդունել ի գիտություն:

3.Լսեցին՝

ԱրՊՀ 2021թ. ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին:

ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյանն ամփոփ ներկայացրեց ԱրՊՀ 2021թ. ծախսերի նախահաշիվը/*կցվում է. առդիր 1 էջ/:*

3.Որոշեցին՝

Հաստատել Արցախի պետական համալսարանի 2021թ. ծախսերի նախահաշիվը:

Նիստի նախագահ՝
Քարտուղար՝

Գ. Ի. Մարտիրոսյան
Լ. Գ. Մարգարյան

Առդիր 19 էջ

ք. Ստեփանակերտ
05.04.2021